

26.851

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

Հ. Խ. Ս. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄՍԿԻ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԲԱՆԿՈՐՆԵՐԻՑ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ ՅԵՎԱ-
ՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՅԵՎ ԿՈՒԼՏՏՈՒՐԲ ԳԱՆՁԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

336
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԺՈՂԿՈՄՍԿԻ

1937 թ.

ՅԵՐԵՎԱՆ

17 FEB 2010

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ. ՄԻԱՑԵՔ

Հ. Խ. Ս. Հ. ՖԻԼՈՂՈՐՈՍ

336

2-25

ս6

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՑ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ ՅԵՎԱ-
ՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐՔ ԳԱՆՁԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՖԻԼՈՂՈՐՈՍԻ

1997 թ.

ՅԵՐԿՐԵՐԻ

380
37

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս ձեռնարկը կազմված է ձեռնարկությունների և հիմնարկությունների այն հաշվային աշխատակիցների ամար, վրոնց վրա չե դրված որևէ քով, բանվորների և ծառայողների աշխատավարձից յեկամտային հարկ ու կուլտուրը հաշվարկելու պատահ անատու աշխատանքը: Ձեռնարկում բերված են՝ որենքով, ինչպես և ԽՍՀՄ-ի Ֆինոգրոմատի հրահանգներով սահմանված՝ բոլոր այն կանոնները, վորոնք վերաբերվում են այդ վճարումները հաշվարկելուն և գանձելուն:¹⁾

Աշխատավարձից յեկամտային հարկ և կուլտուրը հաշվարկելու աշխատանքում առաջին պայմանն է որենքի ճիշտ կերպումը:

Այդ պատճառով հաշվային աշխատակիցները պետք է լավ իմանան որենքը և ճշտորեն կիրառեն յեկամտային հարկի և կուլտուրը վճարումների համար սահմանված դրույքատեսակները: Վորպեսզի ապահովել որենքի անշեղ գործադրումը, անհրաժեշտ է կազմակերպել հաշվային աշխատակիցների աշխատանքը: Հաշվային աշխատակիցներն իրենք պետք է կատարեն կրկնակի ստուգումներ և պարզեն, թե վորքան ճիշտ է հաշվարկված յեկամտային հարկի և կուլտուրը գումարները: Այս դեպքում անպայման պետք է ստուգել տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության տնտեսի բոլոր բանվորների և ծառայողների հարկի դրույքները: Հաշվային աշխատակիցները պարտավոր են

1) Բանվորներից և ծառայողներից յեկամտային հարկի և կուլտուրը գանձման այս կանոնները կազմված են 1936 թ. առ 1-ը նոյեմբերի դրեծող որենագրության հիման վրա: Այդ կանոններում, հետագայում կատարվելք բոլոր լրացումների և փոփոխությունների մասին, հաշվային աշխատակիցները պետք է տեղեկանան տեղի շրջանային և քաղաքային ֆինանսական բաժիններում:

նաեւ արտեմատիկորեն հարցաքննել բանվորներին և ծառայողներին և հայտնաբերել խնամվողների համար սահմանված ղեղչերը ստանալու իրավունք ունեցող անձանց:

Պատասխանատու այդ աշխատանքի ճիշտ կատարումը պահանջում է գործի ալգպիսի կազմակերպում: Հաշվային աշխատակիցները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, վորպեսզի բանվորներն և ծառայողներն իրենք ստուգել կարողանան կատարված պահումների ճշտությունը: Իրա համար աչքի ընկնող անհրաժեշտ պետք է փակցնել յեկամտային հարկի և կուլտուրքի դրույքատախտակները: Գործարկում տեղի ունենալը, ՀԱՄԿԽ-ի քարտուղարության 1935 թ. հունվարի 17-ի վորոշման համաձայն, պարտավոր են սխտեմատիկորեն ստուգել աշխատավարձից կատարված պահումների ճշտությունը ձեռնարկությունների և հիմնարկությունների ցեխներում ու բաժիններում, կազմակերպելով հասարակական ստուգիչ պուստեր և պարզաբանելով բանվորներին ու ծառայողներին յեկամտային հարկի և կուլտուրքի սրենքը:

ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՑ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՅԵՎ ԿՈՒԼՏՏՈՒՐԲ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածքներ մասնավոր անձանց վերաբերյալ յեկամտային հարկի կանոնադրությունից, բանվորներից և ծառայողներից ու դյուղատնտեսական ձեռքարկից չզրադվող այլ բնակչությունից կուլտուրք գանձելու մասին որոշումից և ԽՍՀՄ-ի Ֆինոնկոմատի № 187 և 227 հրահանգներից):

ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Յեկամտային հարկի յեն յենթարկվում՝

ա) ԽՍՀ Միության սահմաններում ինքնուրույն յեկամտադրյուններ ունեցող՝ բանվորներն ու ծառայողները, անայնպեղործները, արհեստավորները և այլ քաղաքացիները:

§ 1. Յեկամտային հարկի յենթարկվում են բոլոր այն քաղաքացիները, վորոնց յեկամուտի աղբյուրները գտնվում են ԽՍՀ Միության սահմաններում:

Արտասահմանում մշտապես աշխատող խորհրդային քաղաքացիները յեկամտային հարկի չեն յենթարկվում:

ԽՍՀ Միությունում աշխատող ոտարյերկրյա քաղաքացիները յենթարկվում են յեկամտային հարկի ԽՍՀ Միության քաղաքացիների համար սահմանված հավասար հիմունքներով:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉՀԱՐԿՎՈՂ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Հոդ. 2 Հարկումից ազատվում են՝

ա) այն բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեղված վճարողները, վորոնց աշխատավարձը (հաշվելով նաեւ այն հավելումը վորը սահմանված է հացի, ալյուրի և ձավարի քոր-

տալին սխտեմի վերացման հետեւանքով) չի գերադանցում:

1. 150 ուսուցչաց ամսական՝ Մոսկվա, Լենինգրադ, Սվերդլովսկ, Մազնիտոգորսկ, Զիտա, Բոդոյբո, Խաբարովսկ, Վլադիվոստոկ, Բազովեչենսկ, Վորոշիլով, Կոմսոմոլսկ—Ամուրի վրա քաղաքներում, ինչպես և Լենինգրադի մարզի, Մուրմանի նահանգում և Կարելիայի ԻՍՍՀ-ում:

2 200 ուսուցչաց ամսական՝ Յակուտիայի ԻՍՍՀ-ում և Հեռավոր Արեւելյան յերկրի Սախալինի ու Կոմչատկայի Մարզերում:

3. 140 ուսուցչաց ամսական—ԽՍՀՄ-ի մնացած վայրերում:
§ 2. Բանվորների և ծառայողների համար սահմանված չհարկվող միևնույն չի կիրառվում:

ա) համատեղութային կարգով, վոչ հիմնական աշխատանքի տեղում, ստացվող աշխատավարձի նկատմամբ (կանոնադրութային հոդ. 15-րդ և հրահանգի § 23-րդ):

բ) առանց հեղինակային պայմանագրեր կնքելու՝ գրական աշխատանքից ստացվող յեկամուսնների նկատմամբ (կանոնադրութային 18-րդ հոդ. «բ» կետ):

Հոդ. 3. Հարկումից ազատվում են՝

ա) ԽՍՀ: Միութային Հերոսները, ԽՍՀ. Միութային շքանշաններով կամ պատվավոր հեղավորական զինքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսները:

բ) կադրային հրամանատարական և պետկազմի, ժամկետային և գերթավկետային ծառայութային մեջ գտնվող կադրային կրտսեր հրամանատարական և պետկազմի ինչպես և ժամկետային ու գերթավկետային ծառայութային մեջ գտնվող կադրային շաքային կազմի զինվորականները:

§ 4. 3-րդ հոդվածով սահմանված արտոնությունը տարածվում է նաև՝

ա) Այն անձանց վրա, վորոնք գտնվում են ԽՍՀ. Միութային Ն. Գ. Ժ. Կ-ի սահմանադր. և ներքին պահպանութային իսկական զինվորական ծառայութային մեջ:

բ) Խ. Ս. Հ. Միութային Ն. Գ. Ժ. Կ.-ի Պետական Անվտանգութային Գլխավոր Վարչութային և նրա տեղական մարմինների պետկազմի այն անձանց վրա, վորոնք ունեն հատուկ կոչում (սերժանտ և սերժանտից բարձր):

գ) ԽՍՀ. Մ. Ֆինստրոկոմատի № 187 հրահանգի § 4 «Գ» կետ:

որ նախնական խմբագրությունը փոփոխված է ԽՍՀ Ֆինստրոկոմատի սեպտեմբերի 20 ի № 715 շրջաբերականով և վերջինի մեջ ասված է՝ ԽՍ. Ս. Հ. Մ. Ներքոտրոկոմատի Բանվորա-գյուղացիական Միլիցիայի պետկազմին պատկանող այն անձինք, վորոնք ԽՍ. Մ.-ի Կ. Գ. Կ.-ի և Ժ. Կ. Ս.-ի 1936 թ. ապրիլի 26-ի վորոշման (ման վրա, ստացել են հատուկ կոչում (սերժանտ և սերժանտից բարձր), մասնավոր անձանց յեկամտային հարկի կանոնադրութային 3-րդ հոդվածի և կուլտուրքի որոնքի 3-րդ հոդվածի համաձայն, ազատվում են յեկամտային հարկից և կուլտուրքից այն ուձիկի համար, վոր նրանք ստանում են ԽՍ. Ս. Հ. Մ.-ի Ներքոտրոկոմատի Բանվորա-գյուղացիական Միլիցիայում ծառայելու համար:»

Հոդ. 4. 3-րդ հոդվածում նշված անձինք ազատվում են Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակում ծառայելու համար-ստացվող աշխատավարձի և ուձիկի հարկումից:

Յեթե այդ անձինք, բացի դրանից ունեն նաև ուրիշ յեկամուսնից (որինակ, գրական և պետական աշխատանքից, դասախոսությունից, շնքեր վարձով տալուց և այլ աղբյուրներից), այդ դեպքում նրանք այդ յեկամուսնների համար հարկվում են ընդհանուր հիմունքներով:

§ 6.— Կադրային հրամանատարական պետկազմի ժամկետային և գերթավկետային ծառայութային մեջ գտնվող անձինք, կադրային կրտսեր հրամանատարական և պետկազմի, ինչպես և ժամկետային ու գերթավկետային ծառայութային մեջ գտնվող կադրային-շաքային կազմի զինվորականներն, ազատվում են յեկամտային հարկից այն դրամական վարձատրութային համար, վորը նրանք ստանում են Բ. Գ. Կ. Բ.—ում (Բ. Գ. Կ. Բ.—ի զինվորականների և զինապարտների ու նրանց ընտանիքների արտոնությունների մասին Որոնսգրքի 76-րդ հոդ.):

Այն զինվորականները և զինապարտները, վորոնք կտնչվում են ռազմական ուսուցման և հավաքի համար (կամ վորպես հրահանգիչներ հավաքներն անցկացնելու համար), Բ. Գ. Կ. Բ.—ի շաքերում գտնվելու ժամանակամիջոցում ազատվում են հարկից այն դրամական վարձատրութային համար, վոր նրանք ստանում են Բ. Գ. Կ. Բ.—ից, իսկ քաղաքացիական հիմարկություններում մշտական աշխատանքի համար ստացվող աշխատավարձից և այլ

յեկամուտներէց, հարկը վճարուած են ընդհանուր հիմունքներով:

Հոդ. 6.— Հարկուծից ազատվում են՝

ա) կենսաթոշակաւուները—ստացվող կենսաթոշակի համար.

բ) 200 ուրբուց վոչ ափելի թոշակ ստացող ուսանող-թոշակաւուները—այդ թոշակի համար:

Հոդ. 8.— Հեղինակային վկայագրի արժանացված գյուտաւորութեան համար տրվող վարձատրութիւնը, ինչպէս և տեխնիկական և կազմակերպչական կատարելագործումների համար տրվող վարձատրութիւնը գումարով մինչև 6000 ուրբու տարեկան, յեկամտային հարկի չի յենթարկվում: Յեթե այդ վարձատրութեան տարեկան գումարը 6000 ուրբուց ափելի չէ, ապա հարկվող յեկամուտից հանվում է (չի հարկվում) 6000 ուրբուին, իսկ մնացորդը հարկվում է նայել չհարկվող մինիմումից ազատ լինելու դեպքում (2-րդ հոդ.):

Այդ արտոնութիւնը տրվում է այն դեպքում յեթե վճարողը չունի իր այլ գյուտների համար արված արտոնագրեր (պատենտներ):

§ 12.— Կանոնադրութեան 8-րդ հոդով ձևով նշված արտոնութիւնը տալու ժամանակ շրջ (քաղ.) ֆինրատիւնները պարտավոր են ստուգել՝ բացի հեղինակային պայմանագրից վճարողն ունի արդէն արտոնագիր (պատենտ) ուրիշ գյուտների համար թե վոչ: Այն անձինք, վորոնք ունեն արտոնագիր իրենց գյուտներից վորեւէ մեկի համար, 8-րդ հոդով ձևով նշված արտոնութեամբ չեն ոգտվում և հարկվում են գյուտներից ստացված բոլոր յեկամուտներէ համար 2-րդ կատեգորիայով:

Հոդ. 10-րդ.— Հարկի ամբողջ մուտքը հատկացվում է տեղական բյուջեին:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՑ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ ՅԵՎԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՊԱՇԵԼՈՒ ԿԱՐԻՇ

Հոդ. 11-րդ.— Բանվորներից և ծառայողներից հարկը դանձվում է յւրաքանչյուր ամիս, նրանց անցած ամսվա աշխատավարձի համեմատ, հետեւյալ չափերով՝ (տես № 2 հավելվածը 35-րդ յերեսում):

§ 13. Այն բանվորներից և ծառայողներից, վորոնք իրավունք ունեն ոգտվելու ԽՍՀ Միութեան հեռավոր վայրերում աշ-

խատող անձանց համար ԽՍՀՄ-ի ԿԳԿ և ԺԿԽ 1930 թ. ոգոտութիւն 12-ի վորոշմամբ նախատեսված արտոնութիւններից,— հարկը դանձվում է՝

1.—1-ին գոտու շարքը դասվող հեռավոր վայրերում—նրանց աշխատավարձի 50 տոկոսից:

2.—2-րդ գոտու շարքը դասվող հեռավոր վայրերում—նրանց աշխատավարձի 75 տոկոսից:

§ 14. Հարկը դանձվում է, յեւնելով աշխատավարձի 50 տոկոսից նաեւ՝

ա) վոսկու և պլատինի արդյունաբերութեան հանքային շրջաններէ աշխատողներից 1):

բ) Հյուսիսային—ծովային Ճանապարհի Գլխավոր Վարչութեան այն աշխատողներից, վորոնք աշխատում են հյուսիսում:

գ) այն բանվորներից և ծառայողներից, վորոնք իրավունք ունեն ոգտվելու ՌՍՖՍՀ-ի ԿԳԿ և ԺԿԽ 1932 թ. մայիսի 10-ի վորոշմամբ ՌՍՖՍՀ-ի Հյուսիսային ծայրամասերում աշխատող անձանց համար սահմանված արտոնութիւններից:

§ 15. Յեթե բանվորը կամ ծառայողը մի վորեւէ ամիս ստանում է չհարկվող մինիմումից ցածր, իսկ մյուս ամիսներում չհարկվող մինիմումից բարձր աշխատավարձ, այդ դեպքում հարկը նրանից դանձվում է այն ամիսների աշխատավարձից, յերբ աշխատավարձը գերազանցել է չհարկվող մինիմումին:

1) Վոսկու և պլատինի արդյունաբերութեան մեջ աշխատողների հարկային արտոնութիւնները կիրառելու կարգի մասին ԽՍՀՄ-ի ֆինրատկոմատը ավել է ֆինրատական մարմիններին հետեւյալ ցուցմունքները՝

«ԽՍՀՄ-ի ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. ոգոտութիւն 8-ի վորոշմամբ (ԽՍՀՄ-ի Որ. Ժող. 1936 թ. № 44 հոդ. 373), վոսկու և պլատինի արդյունաբերութեան մեջ աշխատողներին հարկային արտոնութիւններ տալու կարգում մացված է փոփոխութիւն:

ԽՍՀՄ-ի ԿԳԿ և ԺԿԽ այդ վորոշման հիման վրա, այն հարկային արտոնութիւնները, վորոնք որենքով սահմանված են հյուսիսային ծայրամասերում աշխատող անձանց համար (հարկի դանձումը ստացվող աշխատավարձի 50 տոկոսի համեմատ), պետք է արվեն միայն վոսկու և պլատինի արդյունաբերութեան ճարտար—տեխնիկական և դեկավորող վարչատնտեսական կազմի այն աշխատակիցներին, վորոնք աշխատում են վոսկու և պլատինի հանքում: Նոյն ժամ արտոնութիւնը արվում Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ազով—Սևծովյան յերկրների, Դոնբասի և Ուկրաինայի մարզերի սահմաններում գտնվող վոսկու և պլատինի արդյունաբերութեան ձեռնարկութիւններէ աշխատակիցներին:

Հոդ. 12. Այն բանվորների և ծառայողների նկատմամբ, վորոնք իրենց խնամքի տակ ունեն 3 հոգուց ավելի անձինք, հարկը իջեցվում է հետևյալ չափերով՝ 4 հոգի խնամվողներ լինելու դեպքում 25 տոկ, 5 հոգի լինելու դեպքում 30 տոկ, և 6 հոգի կամ 6 հոգուց ավելի խնամվողներ լինելու դեպքում 40 տոկ:

§ 16. Բանվորների կամ ծառայողների խնամվողներ են համարվում բոլոր այն անձինք, վորոնք փաստորեն ապրում են այդ բանվորի կամ ծառայողի միջոցներով և չունեն ինքնուրույն յեկամուտի աղբյուրներ, յեթե նույնիսկ այդ անձինք տվյալ բանվորի կամ ծառայողի հետ չունենան ազգակցական կապ և բնակվում են առանձին:

§ 17. Խնամվող անձանց արտոնությունն ստանալու համար, բանվորները և ծառայողները, պետք է ներկայացնեն հարկի վճարման տեղում տեղեկանք՝ տնային վարչությունից կամ գյուղատնտեսության նախարարից—իրենց խնամքի տակ գտնվող անձանց թվի մասին: Այդ տեղեկանքները ներկայացվում են տարեկան մեկ անգամ և ուժի մեջ են լինում ներկայացման մոմենտից սկսած մինչև տարվա վերջը:

§ 18. Խնամվող անձանց արտոնությունները տրվում են միայն հիմնական աշխատանքի տեղում: Համատեղություն կարգով ստացվող աշխատավարձի հարկման, ինչպես և այլ (բացի աշխատավարձից) աղբյուրներից ստացվող յեկամուտների հարկման ժամանակ խնամվող անձանց համար արտոնություններ չեն տրվում:

Հոդ. 13.— Բանվորների և ծառայողների ամսական աշխատավարձի կազմի մեջ մտցվում են բոլոր տեսակի վարձատրությունների գումարները, ինչպիսիք են՝ հիմնական աշխատավարձը, արտաժամյա և գործարքային աշխատանքի համար ստացված վարձատրությունը, անհատական հավելումները, այն պրեմիաները, վորոնք վճարվում են աշխատանքի պրեմիալ—խրախուսիչ վարձատրման ձևով և այլն:

Հոդ. 14.— Բանվորների և ծառայողների ամսական աշխատավարձի կազմի մեջ չեն մտցվում և չեն յեկամուտային հարկի բոլոր այն միանվագ պրեմիաները, վորոնք տրվում են բանվորներին և ծառայողներին, անկախ նրանից, թե ինչ ֆոնդերի հաշվին են վճարված այդ պրեմիաները (բոլոր տեսակի պրեմիաների հարկման կարգի մասին տես. 27-րդ յեդրույթում հավելված

№ 1 ԽՈՂՄ Ֆինանսականության մարտի 21-ի № 223 շրջաբերականը):

§ 19.— Բանվորների և ծառայողների ամսական աշխատավարձի կազմի մեջ չեն մտցվում և չեն հարկվում՝

ա) այն գումարները, վորոնք վճարվում են գործուղումների ծախսերի փոխհատուցման դիմաց—աշխատանքի որենտրությունը վորոշված սահմաններում, ինչպես և գործուղման ժամանակ ստացվող որապահիկներն ու աշխատավարձի այն հավելումները, վորոնք տրվում են շրջադայող աշխատակիցներին գործուղման ծախսերի փոխարեն:

բ) այն գումարները (նույն թվում միանվագ նպաստները), վորոնք վճարվում են տեղափոխելու, նոր ընդունելու և ուրիշ վայրեր աշխատանքի գործուղելու դեպքերում:

գ) ժամանակավոր անաշխատունակության համար տրվող նպաստները:

դ) լուծարքային նպաստները:

յե) արձակուրդը չորսապատկանելու համար տրվող փոխհատուցումները:

ՄԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ.— Գործուղման ծախսեր չեն հարձարվում այն գումարները, վորոնք վճարվում են վորպես հավելումներ հեռավոր վայրերը աշխատանքի գործուղվող անձանց:

§ 20.— Անցած ամիսներում կատարած աշխատանքի համար բանվորներին և ծառայողներին լրացուցիչ գումարներ վճարելու դեպքում (այն գումարները վորոնք վճարված չեն յեղել այդ ամիսների հերթական աշխատավարձը տալու ժամանակ) տրվող բոլոր գումարները, մտցվում են այն ամսի հարկվող աշխատավարձի կազմի մեջ, յերբ այդ գումարները փաստորեն վճարվել են:

§ 21.— Յեթե բանվորը կամ ծառայողը, անցել է աշխատանքի, կամ հեռացել է աշխատանքից ամսվա միջում, նրա հարկը հաշվարկվում է այդ ամսվա համար ստացված փաստացի աշխատավարձի գումարից, յեթե այդ գումարը գերազանցում է ահմանված չհարկվող միջինումին:

§ 22.— Այն գումարները, վորոնք վճարվում են բանվորներին և ծառայողներին ընթացիկ որացուցային ամսում արձակուրդի մեջ գտնվելու ժամանակամիջոցի համար, հարկվում են տվյալ

ամսվա աշխատավարձի կադրում, իսկ այն գումարները, վորոնք վճարվում են հետևյալ որացուցային ամսում արձակուրդի մեջ գտնվելու ժամանակամիջոցի համար—հարկվում են հետևյալ ամսվա աշխատավարձի կադրում

ՈՐԻՆԱԿ՝ բանվորը գնում է արձակուրդը սկսած հունիսի 25-ից մինչև հուլիսի 8-ը և գնալիս ստանում է՝

Աշխատավարձ հունիսի առաջին 24-օրվա համար	240 ու.
արձակուրդային հունիսի 24-ից մինչև 30-ը	60 ու.
արձակուրդային հուլիսի 1-ից մինչև 8-ը	84 ու.

Ընդամենը . . . 384 ու.:

Արձակուրդը գնալու ժամանակ այդ բանվորի հարկը պետք է պահվի միայն հունիս ամսվա աշխատավարձի լրիվ գումարից. այսինքն 300 ուրլուց (240+60):

Արձակուրդի ժամանակամիջոցի համար բանվորի կողմից հուլիս ամսում ստացված 84 ուրլին պետք է մտցվի հուլիս ամսվա հարկվող աշխատավարձի կադրի մեջ:

Հոդ. 15.— Համատեղության կարգով յերկու կամ մի քանի ձեռնարկություններում, հիմնարկություններում և կադմակերպություններում աշխատող բանվորների և ծառայողների հարկը հաշվարկվում է և վճարվում յուրաքանչյուր աշխատանքի տեղում առանձին: Այդ դեպքում չ' հարկվող միևնույնը (հոդ. 2) կիրառվում է միայն հիմնական աշխատանքի տեղում:

§ 23.— Այն դեպքերում, յերբ համատեղությանը (վոչ հիմնական աշխատանքի տեղում), կամ առանց հեղինակային պայմանագրերի գրական աշխատանքի համար ստացվող վարձատրությունը 140 ուրլուց ցածր է, հարկն այդ աշխատավարձից հաշվարկվում է 0,4%-ի չափով:

Հարկի այդ նույն գումարը (0,4%) կիրառվում է այս հրահանգի § 13 և 14-ի կարգով սահմանված արտոնություններ ոգտվող բանվորների և ծառայողների հարկման ժամանակ այն դեպքերում, յերբ նրանց հարկվող աշխատավարձի գումարը (լրիվ աշխատավարձի 50%-ը կամ 75%-ը) չի գերազանցում 140 ուրլուց:

§ 24.— Յեթե բանվորները և ծառայողները ուրիշ ձեռնարկությունների, հիմնարկությունների և կադմակերպությունների կողմից, համար պատահական աշխատանք են կատարում (երենց հիմնական

աշխատանքի հետ պագահեռ), այդ դեպքում նրանց այդ վաստակը հարկվում է համատեղության աշխատանքի համար ստացվող աշխատավարձի հիմունքներով: Յեթե վարձատրությունը սահմանվում է վոչ թե ամսական մասնակի վճարումներով, այլ ամբողջ աշխատանքի համար, այդ դեպքում վարձատրության յուրաքանչյուր առանձին վճարումի հարկը հաշվարկվում է արված գումարի համեմատ, իսկ աշխատանքը ավարտելուց հետո վերջնական հաշիվը փակելու ժամանակ, կատարվում է հարկի վերահաշվարկում յերկուով ամբողջ աշխատանքի համար վճարված վարձատրության ընդհանուր գումարից, (հանելով տեղյակում պահված գումարները):

Այդ կանոնը չի տարածվում այն բանվորների և ծառայողների վրա, վորոնք սխտեմատիկորեն, իրենց աշխատանքի ժամեքից դուրս, զբաղվում են տնայնագործական և արհեստավորական արհեստներով, յեթե նույնիսկ աշխատանքը նրանք կատարելու լինեռ ձեռնարկությունների, հիմնարկությունների և կադմակերպությունների պատվերներով:

Նման արհեստների յեկամուտների համար, այդ անձինք հարկվում են 2-րդ կատեգորիայով:

§ 25.— Բանվորների և ծառայողների հարկման ժամանակ վարձատրության գումարը ընդունվում է լրիվ ուրլիններով ըստ վորում՝ 50 և 50-ից ավելի կուպեկները ընդունվում են մեկ ուրլին, իսկ 50 կուպեկից պակաս գումարը հաշվի չի առնվում:

Այդ կանոնը կիրառվում է նաև չհարկվող միևնույնը վորոշելու ժամանակ:

Հոդ. 16.— Այն բանվորները և ծառայողները, վորոնք ունեն կողմնակի յեկամուտներ վոչ աշխատավորական պայմանագրերով կատարած աշխատանքից և ուրիշ աղբյուրներից, բացի ոժտողակ գյուղատնտեսությունից (հոդ. 5) հարկվում են համապատասխան կատեգորիաներով (հոդ. 19)—անկախ աշխատավարձի հարկումից:

Հոդ. 17.— Բանվորներից և ծառայողներից հարկը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում է այն ձեռնարկությունների, հիմնարկությունների և կադմակերպությունների կողմից, վորտեղ բանվորներն ու ծառայողներն աշխատում են և պահվում է ամիսը մեկ անգամ աշխատավարձը վճարելու ժամանակ:

§ 26.— Բանվորներից և ծառայողներից հարկի պահումը

կատարվում և յուրաքանչյուր ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձը վճարելու ժամանակ: Շրջ. (քաղ.) ֆինրաժիններն իրավունք ունեն ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների միջնորդությամբ թույլատրել հարկի պահույնը կատարել հաջորդ ամսվա աշխատավարձի առաջին վճարումից:

§ 27.— Ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպություններն յուրաքանչյուր ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձի գումարները վճարելու համար, Պետքանկի հիմնարկություններին պահանջ (կամ բյուջետային չեկեր) ներկայացնելու հետ միաժամանակ, պարտավոր են ներկայացնել նաև կարգադրություն—հրաման (կամ չեկ) Պետքանկին իրենց հաշվարկյին հաշվից բանվորներից և ծառայողներից հասանելի չեկամտային հարկի գումարները բյուջե փոխանցելու մասին:

Այն կազմակերպությունները, վորոնք չունեն հաշվարկային հաշիվներ Պետքանկում, բանվորներից և ծառայողներից պահած հարկը մուծում են վոչ ուշ, քան աշխատավարձը վճարելու հաջորդ օրը:

Պահած գումարների մուծման հետ կապված ծախսերը ընկնում են հարկի պահում կատարող ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների վրա:

§ 28.— Բանվորներից և ծառայողներից հարկը պահելու մասին նշանառումներն արվում են ուճկացուցակներում, կամ անձնական հաշիվներում:

Բանվորներին, ծառայողներին և նրանց հավասարեցված անձանց (հոդ. 18) չեկամտային հարկի յինթարկելու մասին փառաթղթերը, ստուգման նպատակով, պետք է ներկայացվեն ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից շրջ. (քաղ.) ֆինրաժինների հարկային տեսուչներին, նրանց ոգնականներին և այլ անձանց, վորոնք շրջ. (քաղ.) ֆինրաժինների կողմից լիազորված են ստուգում կատարելու համար:

§ 29.— Շրջ. (քաղ.) ֆինրաժինները պարտավոր են յեռադատարանում առնվազն մեկ անգամ ստուգել յուրաքանչյուր ձեռնարկության, հիմնարկության և կազմակերպության բանվորների և ծառայողների չեկամտային հարկի գանձման ճշտությունը, ինչ-

պես և հետևել վոր հարկի պահած գումարները ժամանակին փոխանցվեն տեղական բյուջե:

§ 30.— Բանվորներից, ծառայողներից և նրանց հավասարեցված անձներից (բացի մասնավոր ձեռնարկությունների բանվորներից և ծառայողներից, ինչպես և տանն աշխատող կոոպերացված անաշխատգործներից) չեկամտային հարկի դիմաց սխալ գանձված գումարները, պետք է վերադարձվեն նրանց անմիջորեն ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից հարկի մոտազա մուտքերի (պահումների) գումարներից, կամ վճարողների ցանկությամբ հաշվակցվեն հետագա վճարների դիմաց: Սխալ գանձված հարկի գումարները վերադարձումների և հաշվակցումների մասին, ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության վարչությունը, պարտավոր է յերեք օրվա ընթացքում հայտնել շրջ. (քաղ.) ֆինրաժին:

Մասնավոր ձեռնարկությունների բանվորներից և ծառայողներից ու տանն աշխատող կոոպերացված անաշխատգործներից սխալ գանձված հարկի գումարները վերադարձնում է շրջ. (քաղ.) ֆինրաժինը՝ հարկերի և վոչ հարկային վճարումների գանձման վերաբերյալ 1932 թ. սեպտեմբերի 17-ի կանոնադրության 40-րդ հոդ. կարգով:

§ 31.— Յեթն հայտնաբերվեն ախպիսի դեպքեր, վոր բանվորից կամ ծառայողից հարկը գանձված է ավելի պակաս չափով, քան պահանջվում է, կամ հայտնաբերվի վրիպում հարկումից, ձեռնարկության (հիմնարկության, կազմակերպության) վարչությունը պարտավոր է վերահաշվարկել հարկը վոչ ավելի, քան վերջին յերեք անցած ամիսների համար և դանձել այդպիսին հավասար մասերով, յերեք ամսվա ընթացքում:

Բանվորներից և ծառայողներից չպահված հարկի գանձումն ավելի վաղ ժամանակամիջոցի համար, չի թույլատրվում: Արգելվում է նաև աշխատանքից ազատված, կամ մեկ ձեռնարկությունից (հիմնարկությունից, կազմակերպությունից) մյուսն աշխատանքի անցնող բանվորների և ծառայողների չպահված հարկի գանձումը:

Թերազանձումների և վրիպումների համար, պատասխանատվությունը չեկամտային հարկի կանոնադրության 36-րդ հոդ. համաձայն ընկնում է ձեռնարկությունների, հիմնարկությունների

րի և կազմակերպությունների ղեկավարների ու այդ ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ֆինանսական մասերի ղեկավարների վրա:

Հոդ. 18.— Բանվորների և ծառայողների հետ հավասար հիմունքներով հարկվում են՝

ա) այն ուսանողները և ասպիրանտները, վորոնք ստանում են ամսական 200 ռ. ավելի թույլ:

ա) 1) Բանվորա-գյուղացիական Միլիցիայի, ռազմականացված հրշեջ պահակի և ԽՍՀ Միության Ներքերծծողկոմատի այլ մարմինների աշխատակիցները, ինչպես և այլ գերատեսչությունների ռազմականացված կազմակերպությունների աշխատակիցները:

բ) Առանց հեղինակային պայմանագրեր կնքելու գրական աշխատանքից յեկամուտներ ստացող անձինք:

գ) Ընդհանուր արհեստանոցներում աշխատող կոոպերացված տնայնագործները և արհեստավորները:

դ) Տանն աշխատող—արտադրական արտերների անդամներ հանդիսացող կոոպերացված տնայնագործները և արհեստավորները—այն վարձատրության համար, վորը նրանք ստանում են իրենց արտադրանքն արտերներին հանձնելու համար (այն արտերներին, վորին անդամակցված են):

յ) Պաշտպանների Կոլեգիայի անդամները—խորհրդատուական կոլեկտիվներից ստացվող վարձատրության համար:

§ 32.— Բանվորագյուղացիական Միլիցիայի և ԽՍՀ Միության Ներքերծծողկոմատի այլ մարմինների այն աշխատակիցները, վորոնք թվարկված են հրահանգի § 4-ում, ազատվում են ծառայության տեղում Ներքերծծողկոմատի մարմիններից ստացվող վարձատրության հարկուրից:

§ 33.— Կանոնադրության 18-րդ հոդ. «Բ» կետի կարգով, հարկվում է այն հոնորարը, վորն ստացվում է առանց հեղինակային պայմանագրեր կնքելու լրագրներում և ամսագրերում հոդվածներ և նկարներ տալու, պատկերներ, ֆոտո-ըկզորտաժի և նման աշխատանքի համար:

§ 34.— Տանն աշխատող և իրենց արտադրանքն արտերին հանձնող կոոպերացված տնայնագործները հարկվում են արտերից ստացվող աշխատավարձի ընդհանուր գումարի համեմատ, ըստ

վորում հանվում են այն ծախսերը, վորոնք կապված են հանձնած առարկաների արտադրության կամ կատարած աշխատանքի հետ:

Արտերին արվող անդամավճարները հավասարապես և ստացված վարձատրության այլ մասհանումները (հարկեր և այլ վճարներ), հարկվող յեկամուտից չեն հանվում: Այն ծախսերը, վորոնք յուրաքանչյուր ամիս պետք է հանվեն աշխատավարձի ընդհանուր գումարից—վորոշվում են արտերի (ընկերության) կողմից ծախսերի կայուն նորմաների հիման վրա: Ծախսերի նորմաները յուրաքանչյուր տեսակի արհեստի համար շրջ(քաղֆին.) բաժնի միջնորդությամբ սահմանում են շրջգործկոմները և քաղխորհուրդները:

ՇԵՂՆԱԿԱՅԻՆ ՅԵՎ ՍՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՁԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՇԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՍԱՑՎՈՂ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՆ ԿԱՐԳԸ

Հոդ. 26.— 1-ին կատեգորիայի շարքը դասվող այն վճարողները, վորոնք վարձատրություն (հոնորար) են ստանում հեղինակային կամ այլ պայմանագրերի համաձայն ձեռնարկություն, ներից, հիմնարկություններից և կազմակերպություններից հարկը վճարում են հետևյալ կարգով.

ա) Վարձատրությունը վճարելիս, ձեռնարկությունները հիմնարկությունները և կազմակերպությունները հարկը հաշվարկում են № 1 ցանկով (տես № 2—ա. հավելվածը), յեղնելով պայմանագրով նախատեսված ընդհանուր գումարից:

Վարձատրության յուրաքանչյուր վճարը տալու ժամանակ պահվում է հաշվարկված հարկի գումարի համապատասխան մասը:

բ) Տարին լրանալուց հետո, տարեկան հարկի դրույքը հաշվարկվում է ֆինմարմինների կողմից: Հարկի դրույքի և պահած գումարների տարբերությունը, լրացուցիչ գանձվում է վճարողից, կամ վերադարձվում է նրան 20 որվա ընթացքում:

§ 66.— Այն ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպությունները, վորոնք վճարում են հոնորար կանոնադրության 26-րդ հոդվածում նշված անձանց, հարկի վճարումները հաշվարկում են պայմանագրով նախատեսված հոնորարի լրիվ



այն գումարից (առանց վորեւ հանումների), վորը պետք է վճարվի տվյալ հարկային տարվա ընթացքում:

Հարկը հաշվարկվում է պահվում է նաև այն դեպքերում, յերբ պայմանագրի գումարը չի գերազանցում չ'հարկվող միւնի-մուսին: Յեթե վերջնական հաշվարկի ժամանակ պարզվի, վոր պայ-մանագրով նախատեսված հոնորարի գումարը կատարած աշխա-տանքի համար բարձրացել կամ իջել է (փոփոխվել է), այդ դեպքում հոնորար վճարող ձեռնարկությունը, հիմնարկությունը և կազմակերպությունը կատարում է հարկի վերահաշվարկում փաստորեն վճարած հոնորարի գումարի համեմատ:

§ 67.— Տարին անցնելուց հետո, վճարողի կողմից տարվա ընթացքում բոլոր պայմանագրերով ստացված հոնորարների ընդ հանուր գումարի համեմատ, հարկի վերահաշվարկում շրջ. (քաղ.) ֆին. բաժինները կատարում են այն դեպքում, յեթե վճարողը տալիս է հայտարարություն դրա մասին: Հայտարարության (գեկլարացիայի) հետ միասին վճարողը պարտավոր է ներկայաց-նել՝

ա) ձեռնարկություններից, հիմնարկություններից և կազմա-կերպություններից տեղեկանքներ՝ ստացված հոնորարների գու-մարների և հոնորարներից պահված հարկի գումարների մասին (յուրաքանչյուր պայմանագրի համար առանձին):

բ) տեղեկություններ տվյալ աշխատանքի վրա կատարած փաստացի արտադրական ծախսերի մասին:

§ 68.— 67-րդ պարագրաֆում նշված տեղեկությունների հիման վրա, շրջ. (քաղ.) ֆինբաժինների հարկային տեսուչները հաշվում են վճարողի հարկվող յեկամուտի ընդհանուր գումարը, ըստ վորում՝

ա) Խորհրդային Միության հերոսների, ԽՈՂ Միության շքանշաններով և պատվավոր հեղափոխական զինքով պարգեվա-տրված անձանց ու աշխատանքի հերոսների նկատմամբ, բացի արտադրական ծախսերից, հանվում է ընդհանուր (վալավոյ) յե-կամուտից 6000 ռ. տարեկան:

բ) Համ. Կ(բ) անդամների նկատմամբ, բացի արտադրական ծախսերից յեկամուտից հանվում են կուսակցական դրամարկդի ոգտին արված մասհանումները:

Հարկային տեսուչը հարկվող այդ յեկամ. տ' գումարից № 1 ցանկով հաշվարկված հարկի դրույքի դիմաց, հաշվակցում է

(взачитывает) բոլոր այն գումարները, վորոնք պահված են յեղել ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպություն-ների կողմից:

Վերահաշվարկումից հետո հասանելիք հարկի գումարները վճարում են շրջ. (քաղ.) ֆինբաժնի ծանուցագրերը ստանալուց հետո, 20 որվա ընթացքում:

Գերավճարված գումարները վերադարձվում են վճարողնե-րին շրջ. (քաղ.) ֆինբաժինների կողմից, տեղական բյուջեյի մի-ջոցներից՝ վերահաշվարկումից հետո՝ 5 որվա ընթացքում:

§ 69.— Այն անձինք, վորոնք ստանում են հեղինակային վար-ձատրություն, իւենց դրամատիկ, յերաժշտական և եստրադային ստեղծագործությունների և կինոնկարների (սցենարիստներ) հրա-պարակային կատարումների համար, հարկը վճարում են հետևյալ կարգով՝

ա) յուրաքանչյուր յեռամսյակում հեղինակային իրավունք-ները պաշտպանող վարչությունները, հարկը հաշվարկում են № 1 ցանկով (առանց չ'հարկվող միւնիսուսի կիրառման) վարձատրու-թյան այն ընդհանուր (վալավոյ) գումարից, վորը վճարվում է ամեն մի յեռամսյակի համար և հաշվարկված գումարը պահում են տվյալ յեռամսյակում վարձատրությունը վճարելու ժամա-նակ:

բ) տարին անցնելուց հետո, յեթե վճարողը ներկայացնում է հայտարարություն, հարկի դրույքը հաշվարկվում է ֆինանսա-կան մարմինների կողմից հրահանգի § § 67 և 68-ում նշված կար-գով և լրացուցիչ հաշվարկված գումարները մուծվում են վճարող-ների կողմից, իսկ գերավճարները վերադարձվում են նրանց նույն ժամկետներում:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎՍՈՒՄԸ

Հոդ. 32.— Հիմնարկությունները, ձեռնարկությունները և կազմակերպություններն, ինչպես և մասնավոր անձինք, պարտա-վոր են հայտնել ֆինանսական մարմիններին յեկամտային հարկը վորոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ այս կանոնա-դրության հրահանգով սահմանված կանոններով և ձևվերով:

Հոդ. 33.— Ֆինանսական մարմինների պաշտոնատար ան-ձանց իւավունք է վերապահվում՝

ա) անարգել մտնել բոլոր ձեռնարկություններն այլ և այն չհնքերը, վորտեղ կիրառվում են արհեստներ և ստուգել վերջիններիս վերաբերվող փաստաթղթերն ու գրանցումները.

